ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ

ՎԱՀԱԳՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակած առաջին պետության մեջ՝ Հայաստան աշխարհում հիմնադրված առաջին եկեղեցին էջմիածնի տաճարն է։ Վաղ միջնադարի այս եզակի հուշարձանի մասին նրա հիմնադրման օրից ի վեր պատմական և մատենագրական բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել։ Եկեղեցու և նրա ճարտարապետական ձևի հետ կապված խնդիրներին անդրադարձել են ճանապարհորդներ, հայագետներ ու հայ ճարտարապետության պատմությամբ զբաղվող գրեթե բոլոր գիտնականները։ Թերևս ոչ մի հուշարձանի մասին այնքան բազմաքանակ, հակամետ ու իրարամերժ կարծիքներ չեն հայտնվել, որքան էջմիածնի տաճարի մասին։ Ուսումնասիրողները բազմիցս նշել են նրա բացառիկ տեղը ե դերը ոչ միայն հայ, այլև ընդհանրապես քրիստոնեական ճարտարապետության պատմության մեջ։ Սակայն, որքան էլ զարմանալի թվա, մինչև օրս էջմիածնի տաճարը մասնագիտական գրականության մեջ ներկայացված չէ գիտական տարրական մակարդակով՝ չկա նրա նկարագրությունը, չկան նույնիսկ նրա հիմնական չափագրությունները։ Տարօրինակ է, բայց այսօր, պարզապես նայելով միայն, հուշարձանի հարավային ճակատում կարող ենք «հայտնաբերել» հայկական վաղ միջնադարին բնորոշ ու թերևս նրա ամենավաղ օրինակը հանդիսացող քանդակազարդ մի քար, իսկ հարավային և արևմտյան ճակատներում՝ աննախադեպ լուծված պսակի օրինակ, որոնք մինչև օրս չեն նկատվել, չեն արժանացել անգամ սովորական արձանագրման և դուրս են մնացել գիտական շրջանառությունից։ Գրեթե նույն բախտին են արժանացել նաև տաճարի քիվը, մույթերի քանդակազարդ խոյակներն ու որմնամույթերի խարիսխները։ Այսօր դեռ հրատարակված չեն բավական խնամքով մշակված մույթերի խարիսխների, մույթերի, կամարների, թաղերի ամենապարզ նկարագրություններն ու չափագրությունները։ Մինչդեռ առանց մանրամասն նկարագրության և չափագրության տաճարի նշված մանրամասները հնարավոր չէ ուսումնասիրել, որովհետև 1950-ականներին կատարված վերակառուցումից հետո դրանց դիտարկումը, առավել ևս չափագրումը դարձել է պարզապես անհնար։

Էջմիածնի տաճարի մասին հայտնված կարծիքները, բացառությամբ մեկ-երկուսի, այն տրպավորությունն են թողնում, կարծես, ասվել են ոչ միայն առանց տաճարը տեսնելու կամ ուսումնասիրելու, այլև առանց եղած կարծիքներին իրազեկ լինելու։ Վաղ միջնադարի ճարտարապետության ուսումնասիրությունների վիճակն ու մակարդակը բնորոշելու համար նույնիսկ մեղմ է հնչում Թ. Թորամանյանի դեռևս 85 տարի առաջ ասածը. «Թող ոչ ոք չի պարծենա հայ պատմության և արվեստների անունով իբրև հետազոտություն գոյություն ունեցող քանի մը ողորմելի հատորներով, այդ բոլորը՝ բաղդատելով գտնված նյութերու անհունության հետ, ոչ միայն չնչին ու աննշան են, այլև իրենց բովանդակած հակասություններով ու աններելի սխալներով միանգամայն աննպատակահարմար են»[1]։ Այս մտքի հաստատումը չէ՞, արդյոք, այն փաստը, որ այսօր ոչ միայն Հայաստանի վաղ միջնադարի ճարտարապետությանը նվիրված որևէ ամփոփ ուսումնասիրություն, այլև ամենապարզ գիտական նկարագրությամբ ու չափագրություններով մի գրքույկ անգամ չունենք՝ նվիրված հայ և համաշխարհային արվեստի պատմության բացառիկ հուշարձանին՝ էջմիածնի Մայր տաճարին։

Պատմական տեղեկությունների համաձայն էջմիածնի Մայր տաճարը Գրիգոր Լուսավորիչն է կառուցել։ Հայ ճարտարապետության գիտական հետազոտությանը նախորդած բազմաթիվ կարծիքների մեջ ևս հիմնականն այն էր, որ գոյություն ունեցող տաճարը Լուսավորչի կառուցածն է։ Բայց գիտական միտքը հենց սկզբից անվերապահորեն մերժեց այդ տեսակետը և արդեն 80 տարի ի վեր պնդում է, որ Լուսավորչաշեն կառույցը գոյություն չունի, որ վաղ միջնադարում այն քանդել են և կառուցել նորը։ Այսպես ստեղծվեց կռահումների, վարկածների, են-

1 Թ. Թորամանյան, Տեկորի տաճարը, Թիֆլիս, 1911, էջ Ժ։

թադրություններ մի անսպառ հոսանք, որոնցից յուրաքանչյուրը ոչ թե որոշակիացնում, այլ ավելի անորոշ էր դարձնում խնդրո առարկան։ Ուսումնասիրողները գտան, որ մեզ հասած տաճարը հիմնադրվել է V դարում և մի քանի վերակառուցումներից հետո՝ միայն VII դարում է ստացել հաակագծի վերջնական՝ այսօրվա ձևը, որ տաճարը կառուցվել է V դարում և մեզ է հասել անփոփոխ, որ IV դարի կառույցից ինչ-որ հատվածներ պահելով հիմնովին վերակառուցվել է V դարում, որ IV դարի հուշարձանը V դարում քանդել են և կառուցել նոր հուշարձան, այնուհետև VII դարում դա նույնպես քանդել են և VII դարում կառուցված հուշարձանն է հասել մեզ, որ տաճարը հատակագծի վերջնական ձևը ստացել է միայն XV դարում։ Այսինքն՝ տաճարը թվագրեցին ոչ ավել, ոչ պակաս հազար տարվա տարբերությամբ։

Բազմաքանակ տարբերակներ ծնվեցին նաև հուշարձանի ծավալատարածական հորինվածքի որոնումներից։ Ուսումնասիրողները գտան, որ տաճարը ուղղանկյուն ծավալի մեջ ամփոփված խաչաձև հորինվածք է ունեցել, որ ուղղանկյուն ծավալ է ունեցել, բայց ոչ թե ներքին խաչաձև հորինվածքով, այլ միայն չորս սյուներով, որ ոչ խաչաձև հորինվածք է ունեցել և ոչ էլ չորս սյուներով, այլ պարզապես եղել է միանավ, որ ոչ միանավ է եղել, ոչ՝ չորս սյուներով և ոչ էլ խաչաձև, այլ եղել է եռանավ։

Գտան նաև, որ տաճարը եղել է առանց գմբեթի, մեկ գմբեթով, հինգ գմբեթով, ներքին մեկ խորանով, ներքին չորս խորանով, արտաքին մեկ խորանով, արտաքին չորս խորանով, առանց արտաքին խորանների, երկու ավանդատնով, չորս ավանդատնով, առանց ավանդատների։ Մի խոսքով՝ կարծես համոզված, որ ոչինչ պարզ չէ և չի էլ պարզվելու, առաջադրվեցին տաճարի հորինվածքի, նրա փոփոխման և թվագրման հետ կապված հնարավոր և անգամ անհնար գրեթե բոլոր տարբերակները։

Այս բոլոր կարծիքները ծայր առան այն բանից հետո, երբ ընդունվեց, որ Լուսավորչաշեն տաճարը մեզ չի հասել։ Քննությունը բերում է այն համոզման, որ հենց այդ ելակետն է սխալ, որ որդեգրեցին բոլոր ուսումնասիրողները՝ առանց տարակույսի և վերապահման։ Մեր նպատակն է պարզել ելակետային այս սխալի հիմնորոշ պատճառները, ուստի այսօրինակ հարցադրման դեպքում վերոհիշյալ բազմաքանակ կարծիքները առանձին-առանձին ներկայացնելու և, մանավանդ, դրանց առանձին-առանձին կամ ընդհանուր ձևով անդրադառնալու հարկ չկա։

Այսօրվա տաճարը Լուսավորչի կառուցածը չհամարելու հիմնական պատճառներից մեկը, եթե ոչ հիմնականը, մեր կարծիքով, հայ ճարտարապետության դիտական առաջին ուսումնասիրություններից սկսած և մինչև օրս իներցիայի ուժով փոխանցված ու այժմ կարծրացած այն հիմնական տեսակետն է, թե հայ եկեղեցական ճարտարապետությունը սկսել է պարզից և ընթացել քայլ առ քայլ՝ բարդացման ճանապարհով։ Դա վերաբերել է թե՛ սրահավոր, թե՛ գմբեթավոր հորինվածքներին և հիմք հանդիսացել քրիստոնեական ճարտարապետության ծագման ու զարգացման պատկերի ուրվագծման համար։ Ուսումնասիրողները գտնում են, որ վաղ շրջանի հուշարձանները վերջնականապես ձևավորվել են տարբեր ժամանակներում, սկզբնական պարզ հորինվածքներին աստիճանաբար արված նոր հավելումներով միայն, և հուշարձանները պարզից բարդ շարելով ստանում են զարգացման ընթացքի պատկերը։ Սրանից ելնելով էլ քրիստոնեությունից առաջ և քրիստոնեության վաղ շրջանին պատկանող, այդ թվում և պատմական տեղեկություններ ունեցող կառույցները թվագրում են միայն V դարից սկսած։ Սրա հիման վրա էլ անվերապահորեն ընդունվում է այն կարծիքը, թե Հայաստանի առաջին եկեղեցիները միանավ կամ պարզ եռանավ հորինվածք են ունեցել։ Այդ տեսակետն էր պատճառը, որ ուսումնասիրողները, ծայրահեղության մեջ ընկնելով, զարգացման արդյունք են համարում նույնիսկ մեկ ավանդատուն կամ արտաքին սրահ ունեցող միանավ հուշարձանը։ Արդյունքը եղավ այն, որ Գառնիի հեթանոսական տաճարից մինչև V դար ստեղծվեց մի կատարյալ դատարկություն՝ հակառակ պատմագրական այն բազմաթիվ տեղեկությունների, որ և՛ հեթանոսական շրջանում, և՛ քրիստոնեության առաջին տարիներին գոյություն են ունեցել նույնիսկ բազմաթիվ տաճարներ։ Ճարտարապետության պատմության այս ելակետային տեսակետը կարելի է մերժել նույնիսկ առանց հուշարձաններին անդրադառնալու, թեկուզ անվիճելի այն փաստով միայն, որ ընդհանրապես համայն աշխարհում և մասնավորապես հայոց աշխարհում քրիստոնեությունը առաջին կրոնական հաստատությունը չէր, և ոչ էլ եկեղեցու շենքը՝ պաշտամունքային առաջին կառույցը։ Ավելին, քրիստոնեության վաղ շրջանի ճարտարապետության նկատմամբ մինչև օրս կիրառվող տեսակետը կասկածելի է նույնիսկ ընդհանրապես ճարտարապետության զարգացման վաղ շրջանի առումով։

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ հիմնական և անառարկելի համար-

վող մեկնակետը զարգացման ընդհանուր դրության պարզունակ ընկալման արդյունք է միայն, և դրա հիման վրա ստեղծված հայ քրիստոնեական ճարտարապետության ծագման ու զարգացման պատկերը, ինչպես նաև վաղ շրջանի բազմաթիվ հուշարձանների թվագրումները միանգամայն անընդունելի են։ Այս թեզն էլ հանգեցնում է Հայաստանի վաղ միջնադարի ճարտարապետության պատմության վերանայման։ Իհարկե, խնդիրն այնքան մեծ է և բարդ, որ մի հոդվածի սահմաններում հնարավոր չէ հարցերի թվարկումն անգամ։ Այս առումով բացառիկ նշանակություն է ձեռք բերում Էջմիածնի Մայր տաճարը։ Քրիստոնեական առաջին այս հուշարձանն ինքնին այն առանցքն է, հիմքը, որով ոչ միայն հնարավոր է դառնում ապացուցել առաջադրված դրությունը, այլև ճշտել քրիստոնեական ճարտարապետության ծագման ու զարգացման մասին ունեցած մեր պատկերացումները։

Էջմիածնի տաճարի մասին մեր տեսակետը, որը մինչև օրս նույնիսկ չի ակնարկվել գիտական ուսումնասիրություններում, հետևյալն է՝ այսօր մեզ հասած Մայր տաճարի շենքը Գրիգոր Լուսավորչի կառուցածն է և իր ճատակագծային ու ծավալատարածական ճորինվածքով (ի բացառյալ զմրեթի) հիմնադրման օրից ի վեր վերաշինման կամ սկզբունքային որևէ փոփոխության չի ենթարկվել։ Տաճարի մասին եղած գիտական բոլոր կարծիքները, այդ թվում նաև միակ ընդունվածը, որի համաձայն Վահան Մամիկոնյանը քանդել է Լուսավորչաշեն կաթողիկեն, կառուցել նորը, և այդ նորն է հասել մեզ, սխալ են։ Մեզ հասած Մայր տաճարը Լուսավորչաշեն չհամարելու և Վահան Մամիկոնյանին վերագրելու վարկածի հիմքում ընկած է Ագաթանգեղոսի պատմության փաստերի ոչ ճիշտ ընկալումը կամ անտեսումը։ Եվ ապա՝ երկու հիմնական փաստարկ. առաջին. Ղազար Փարպեցու վկայությունը մեկնաբանվում է իբրև Վահան Մամիկոնյանի կողմից տաճարը վերաշինելու, նոր տաճար կառուցելու փաստ և՝ երկրորդ. տաճարի արևելյան խորանում պեղումներից հայտնաբերված մնացորդները համարվում են Վահան Մամիկոնյանի կառուցածին նախորդած Լուսավորչաշեն տաճարի քանդված լինելու իրեղեն վկայություն։ Ուրեմն, եթե ապացուցենք, որ մինչև օրս ըստ էության չեն ընկալվել Ագաթանգեղոսի պատմության չափազանց կարևոր փաստերը, և որ ուսումնասիրողների բերած երկու հիմնական փաստարկներն էլ անհիմն են, ապա դրանով, բնականաբար, ապացուցած կլինենք, որ այսօր մեզ հասած Մայր տաճարը Գրիգոր Լուսավորչի կառուցածն է։

Ըստ Ագաթանգեղոսի Գրիգոր Լուսավորիչը տեսիլք է տեսնում, որտեղ նրան հրամայվում է կառուցել Աստծո անվան տուն՝ Կաթողիկե եկեղեցի և ցույց է տրվում անձեռակերտ, աստվածային մի շինվածքի պատկեր. «Եւ ի շորեցունց սեանցն ի վերայ խաչիցն կամարք զարմանատեսք ի միմեանս կապեցան. և ի վերայ այնորիկ տեսի գմբեթաձև խորանարդ ամպեղէն շինուած աստուածակերտ զարմանալի»[2]։ Տեսիլքում պատկերի ընդհանուր ձևը որոշակի է՝ գմբեթակիր կամարներով միմյանց կապված չորս սյուն, վրան գմբեթ, այսինքն, ներկայացվածը քառամույթ (կամ քառասյուն) գմբեթավոր կառույց է։ Սա մեր կարծիքով, իրավացի, նույնիսկ անվիճելի նկատում է, որ արվել է մեզանում, թեև, ցավոք, չի ընդունվել և ըստ արժանվույն ուշադրության չի արժանացել։

Ագաթանգեղոսի պատմության հետ կապված մեր պնդումն այն է, որ ուսումնասիրողները մինչև օրս պարզապես չեն «կարդացել» չափազանց արժեքավոր և բացառիկ նշանակություն ունեցող երկու բացահայտ փաստ. առաջին. Ագաթանգեղոսի պատմության մեջ տեսիլքում ցուցադրվածը ոչ թե ինչ-որ խորհրդանշային կամ շինության պատկեր է, այլ նենց կաթողիկեի պատկերն է։ Երկրորդ. Ագաթանգեղոսի վկայությամբ Էջմիածնի կաթողիկեն կառուցվել է ըստ տեսիլքում ցուցադրված պատկերի, նրա օրինակով։

Անդրադառնանք առաջինին։ Լուսավորչին տեսիլքը ի ցույց դնելուց անմիջապես հետո, նրան տրվում է նաև ցուցադրվածի մեկնությունը։ Բերենք տեսիլքում ներկայացված պատկերի երկու մանրամաս՝ դրանց վերաբերող մեկնությունների հետ մեկտեղ.

Տեսիլք. «Եւ ի շորեցունց սեանցն ի վերայ խաչիցն կամարք զարմանատեսք ի միմեանս կապեցան»[3]։

Մեկնություն. «Իսկ կամարքն որ ի սեանց անտի ի միմեանս կապէին՝ այս ինքն է հաւատարութիւն միաբանութեան կաթողիկէ եկեղեցւոյ»[4]։

---

2 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1914, էջ 376։

3 Նույն տեղում, էջ 376։

4 Նույն տեղում, էջ 380—381։

Տեսիլք. «Եւ սիւն գործեաց լոյսն շողացեալ, ե ծագեաց ի մէջ ներքին սեանցն խարսխաց»5։

Մեկնություն. «Եւ զի ծագեաց լոյսն ի մէջ սեանցն շորեցունց, ե բղխեցոյց զաղբիւրն յորդաբուղխ՝ զի ի կաթողիկէ եկեղեցւոյն շնորհք Հոգւոյն...»6։

Մեկնության այս տողերից դժվար չէ կռահել, որ եթե պատկերի չորս սյուները և դրանց կապող կամարները կաթողիկեին են, ապա տեսիլքում ցուցադրվածը կաթողիկեի պատկերն է։ Ուշագրավ է, որ երբ առաջադրվեց մի վարկած, ըստ որի տեսիլքում պատկերվածը Զվարթնոցի տաճարն է, Թ. Թորամանյանը գրեց. «Այս երազի այլաբանական նկարագրութենեն եթե ուզենք եկեղեցիի մը շինության ճարտարապետական ծրագիր մը հանել, Զվարթնոցեն ավելի կպատշաճի այժմյան էջմիածնի կաթողիկեին, որովհետև նկարագրությունը չորս աղեղնակապ սյուներու վրա դմբեթավորյալ եկեղեցիի մը պատկեր կուտա...»7։

Այժմ բերենք երկրորդ փաստը ապացուցելու համար, որ էջմիածնի տաճարը կառուցվել է տեսիլքում տրված պատկերի օրինակով. «Հասանէր ե յառաջի դաստակերտսն իւր, յոտատաստակն Այրարատեան գաւառին ի Վաղարշապատ քաղաք, ուստի նախ զառաջինն աստուածասաստ հրամանացն լինէր սկիզբն. ուր նախ նշմարեացն և նշանակեալ կանգնեաց զնշան խաչին սրբոյ, ուր է սուրբ վկայքն Աստուծոյ զետեղեցան. և ի նոցա վկայարանսն կանգնեաց սեղանս Աստուծոյ ի հանգիստս սրբոցն. և զնկատեալ տեղին տանն Աստուծոյ շինեաց, զցուցեալն նմա ի տեսլեանն, զյառաջագոյն դրոշմեալն իւր, և կանգնեաց անդ զեկեղեցին Քրիստոսի»8։

Քաղվածքը քաջածանոթ է։ Ուսումնասիրողները, հենվելով այս վկայության վրա, իրավացիորեն ընդունել են, որ կաթողիկեն կառուցվել է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու առաջին տարիներին։ Սակայն ինչքան էլ զարմանալի թվա, այստեղ չի «կարդացվել» ու բացարձակապես անտեսվել է պատմիչի, մեր կարծիքով, հիմնական միտքը, սկզբունքային է էական այն տեղեկությունը, թե «զնկատեալ տեղին տանն Աստուծոյ շինեաց, զցուցեալն նմա ի տեսլեանն»։ Կարծում ենք, որ այս փաստն հավելյալ բացատրության կամ մեկնաբանման կարիք չունի։ Ավելի պարզորոշ և միանշանակ պատմական տեղեկություն դժվար է երևակայել՝ աստծո տան նշանակված տեղում չինեց, տեսիլքի մեջ իրեն ցույց տրվածը։ Ի դեպ, այս միտքն այնքան հստակ է ու միանշանակ, որ Ագաթանգեղոսի պատմության աշխարհաբար թարգմանության մեջ մազաչափ անգամ չի իմաստափոխվել՝ «նշանակված տեղում եկեղեցի շինեց՝ տեսիլքի մեջ իրեն ցույց տրվածը»9։ Այստեղ նշենք միայն, որ «զնկատեալ տեղին տանն Աստուծոյ շինեաց» արտահայտության ավելի ստույգ թարգմանությունը, մեր կարծիքով, պետք է լինի «Աստծու տան նշանակված տեղում շինեց» և ոչ թե «նշանակված տեղում եկեղեցի շինեց»։

Իսկ ինչպես և ում կողմից են ստեղծվել առաջին տաճարներն ընդհանրապես։ Թերևս մի վկայություն միայն և որոշակի նկատառումով հենց Ագաթանգեղոսի պատմության «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի» գլխից. «Քանզի և Մովսիսի նմանութիւն օրինակաւ տարրական խորանի ցուցաւ, ըստ որում կազմեաց խորան նիւթական, և Եզեկիելի՝ տաճար, օրինակ տաճարի։ Նոյնպէս և առաջին մարդոյն նմանութիւն անտարրական մարդակերպ երևեալ Աստուծոյ, զի արասցէ մարդ ի տարրական նիւթոյ՝ մերձաւոր ճշմարտութեանն»10։ Միանգամայն պարզ է, որ լուսավորիչը՝ մեր աշխարհի մարգարեն էլ, պիտի Աստծու կողմից տեսիլք տեսներ, և տեսիլքում նրան էլ պիտի ցույց տրվեր Հայոց աշխարհի առաջին եկեղեցու աննյութական տարրերից կազմված պատկեր-նախագիծը։ Եվ նա էլ պետք է նյութական տարրերից կաթողիկե եկեղեցի կառուցեր և կառուցեր ճշմարտության օրինակով՝ «տեսիլքի մեջ իրեն ցույց տրվածով»11։

---

5 Նույն տեղում, էջ 376։

6 Նույն տեղում, էջ 381։

7 Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, Երևան, 1948, էջ 45։

8 «Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց», էջ 424—425։

9 Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1933, էջ 469։ Հարկ է նշել, որ թարգմանության հեղինակը համամիտ է մեզանում ընդունված այն տեսակետին, թե կաթողիկեն հիմնադրվել է բազիլիկ կառուցվածքով (տե՛ս ծանոթ. 427, էջ 516)։

10 «Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց», էջ 171։

11 Միջնադարի պատմագրության և մատենագիտության մեջ այս փաստը վիճարկող կամ ժխտող ոչ մի տեղեկության չենք հանդիպում։ Ավելին, XII դ. պատմիչ Սամվել Անեցու վկայու-

Ուրեմն Ագաթանգեղոսի վկայությամբ Գրիգոր Լուսավորչին տեսիլքում ցույց է տրվում էջմիածնի կաթողիկեի պատկերը և, ամենակարևորը, որ Լուսավորիչը կառուցել է հենց տեսիլքի մեջ իրեն ցույց տրվածը: Այսինքն. էջմիածնի կաթողիկեն՝ Մայր տաճարը, կառուցվել է քառամույթ գմբեթավոր հորինվածքով: *Պատմագրական այս փաստը բացառիկ նշանակություն ունի հայ և ընդհանրապես քրիստոնեական ճարտարապետության պատմության համար իբրև վկայություն այն բանի, որ Հայաստանի առաջին եկեղեցին նախատեսվել և կառուցվել է քառամույթ գմբեթավոր, հակառակ այն պնդման, թե քրիստոնեական առաջին եկեղեցիները եղել են միանավ կամ եռանավ կամ թե գմբեթավոր եկեղեցիների կառուցման սկիզբը V դարն է։*

Մենք ունենք բացառիկ և աքանչելի մի փաստ՝ պատմիչի վկայությամբ մեզ է հասել աշխարհի առաջին քրիստոնեական եկեղեցու ծննդյան վկայականը, ուր վավերացված է նրա հորինվածքի հիմնական ձևը, տրված է նրա պատկեր-նախագիծը։ Առավել բացառիկ է այն փաստը, որ այսօր մեզ է հասել նաև այդ եկեղեցին և հասել է ճիշտ և ճիշտ պատմիչի վկայած քառամույթ գմբեթավոր հորինվածքով։

Այս երկու փաստերի մեջ մազաչափ անգամ անհամապատասխանություն չկա, դրանք միմիայն լրացնում և հաստատում են իրար։ Անհամապատասխանության միակ կետը այս փաստերի և գոյություն ունեցող տեսակետի մեջ է։ Ու թերևս այդ էր պատճառը, որ ուսումնասիրողները այս երկու փաստերը իրարից զատ կամ իրար կապելով շանացին հերքել և իբրև խնդրի լուծման հեշտ ճանապարհ պարզապես անտեսեցին։ Այսօրինակ շանքերի շնորհիվ էր թերևս, որ վաղ շրջանի մեր պատմիչների նման, վաղ շրջանի ճարտարապետական հուշարձաններն էլ թափառեցին տարբեր դարերում։

Ագաթանգեղոսի պատմության մեջ կա և Նիկիայի ժողովը, և Լուսավորչի մահը։ Անկասկած է, ուրեմն, որ պատմությունը գրվել է այն ժամանակ, երբ կաթողիկեն վաղուց արդեն կանգուն էր։ Այսինքն՝ պատմությունը շարադրելիս, ավելի ստույգ հենց մեզ հետաքրքրող տեսիլքը մեջբերելիս, վերաշարադրելու, շարադրելու կամ որ մեզ անհավանական է թվում՝ հորինելու ժամանակ պատմիչը աչքի առաջ ունեցել է Լուսավորչաշեն կանգուն կաթողիկեն։ Այս պարագայում անհնար է նույնիսկ մտածել, որ Ագաթանգեղոսի պատմության մեջ, տեսիլքում տրված կաթողիկեի և կանգուն կաթողիկեի միջև կարող էր անհամապատասխանություն լինել, այսինքն կառուցված լիներ միանավ կամ եռանավ հորինվածքով, իսկ նկարագրվեր գմբեթավոր։ Մեզ հետաքրքրող խնդրի համար նույնիսկ էական էլ չէ, թե երբ է գրվել Ագաթանգեղոսի պատմությունը կաս տեսիլքը։ Եթե ընդունենք անգամ, որ այն գրվել է V կամ VII դարում, ապա միևնույն է, այս դեպքում էլ անվիճելի է, որ նկարագրությունը վերաբերում է միմիայն Լուսավորչաշեն տաճարի նախաստեղծ ձևին։ Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ տեսիլքում է տրված կաթողիկեի հորինվածքի նկարագրությունը։ Ով և երբ էլ գրած լիներ այս պատմությունը, նա գործ է ունեցել տեսիլքի հետ, աստծո պատգամ-հրամանի հետ, իր ժամանակի բացարձակ ճշմարտության հետ։ Եվ ոչ մի փաստ կամ առիթ չկա կասկածելու, որ կարող էր կեղծվել Լուսավորչի կառուցած տաճարի ձևը։

Ուրեմն մինչև այսօր սխալ է մեկնաբանվել կամ անտեսվել է հայ և համընդհանուր արվեստի պատմության համար բացառիկ նշանակություն ունեցող Ագաթանգեղոսի այն վկայությունը, որ Գրիգոր Լուսավորչին տեսիլքում ցույց է տրվում քրիստոնեությունը պետական կրոն հռչակած առաջին պետության՝ Հայաստան աշխարհի, առաջին եկեղեցու՝ կաթողիկեի, պատկեր-նախագիծը, և նա կաթողիկեն կառուցում է «տեսիլքի մեջ իրեն ցույց տրվածով»՝ քառամույթ գմբեթավոր հորինվածքով:

Այժմ դառնանք Ղազար Փարպեցու տեղեկությանը, որը հիմք է ծառայել այն վարկածի համար, ըստ որի իբր Լուսավորչաշեն կաթողիկեն վաղ միջնադարում քանդել են և կառուցել նորը։ Տեղեկության այսօրինակ մեկնաբանումը հայագետների ու ճարտարապետության ուսումնասիրողների կողմից միշտ և այսօր էլ համարվում է այնքան անառարկելի ու անկասկած ճշմարտություն, որ եթե հարկ է եղել միայն մեկ-երկու խոսքով անդրադառնալ տաճարին, ապա անպայմանորեն վկայակոչել են փաստի ուժ ստացած այս մեկնաբանությունը։ Պատմիչը հայտնում է. «կատարէր զսովորական ուխտս և զպատարագս ի սուրբ եկեղեցւոջն կաթողիկէի, զոր հիմնար-

---

թյամբ՝ հաստատվում է տաճարը ըստ տեսիլքի կառուցված լինելու իսկությունը. «Եւ նորոգեաց զտուն Աստուծոյ՝ այսինքն զսուրբ եկեղեցին։ Զի մեծին Գրիգորի եդեալ էր զհիմն զայն, որպէս և ցուցեալ էր տեսլեանն երեւեցելոյ» (տե՛ս «Ս ա մ ո ւ է լ ի Ա ն ե ց ւ ո յ հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 267)։

կեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ զհնացեալ գործ նախնեացն իւրոց, քայ զօրավարն Հայոց Մամիկոնեանն Վահան»12։ Ուսումնասիրողները «հիմնարկեալ նորոգեաց» արտահայտությունը գիտել են իբրև Վահան Մամիկոնյանի կողմից տաճարը հիմքից քանդելու և նորը կառուցելու փաստ, իսկ «զհնացեալ գործ նախնեացը»՝ իբրև տաճարի հնացած, ավերված լինելու հավաստում։

Փորձենք պարզել այս տողերի բնագրային իմաստը։ Նախ՝ վաղ շրջանի պատմագրության մեջ եկեղեցու շինվածքը, կառույցը «գործ» բառով փոխարինելու օրինակի չենք հանդիպում, իսկ եթե լինի էլ՝ դա չի փոխում հարցի էությունը։ Մինչդեռ բազմաթիվ են այն օրինակները, որոնց հիման վրա կարող ենք պնդել, որ «գործ» նշանակել է՝ եկեղեցու կարգ, պաշտոն և այլն։ Այսպես, Բուզանդը Գրիգորիսի մասին գրում է. «Երթեալ նորոգեաց անդ զեկեղեցիսն լուսաւոր կարգօք, առաջնոյն Գրիգորի՝ հօրն գործոցն նմանեալ» կամ Ներսես կաթողիկոսի մասին՝ «...բայց դու զգործս հօրն քո Գրիգորի, զնոյն առաջնորդութիւնն նորոգեա մեզ»13։ Որ Փարպեցու մոտ «գործը» բացառապես ունի եկեղեցու կարգի և ոչ թե եկեղեցու շենքի իմաստ, հաստատվում է նաև հաջորդ, հոգնակի թվով տրված բառակապակցությամբ՝ «գործ նախնեացն իւրոց»։ Ինչպես վկայում են մատենագրական բոլոր տեղեկությունները, Լուսավորչից սերված և նրան հաջորդած հայոց բոլոր կաթողիկոսները մշտապես նորոգել են հնացող կամ խախտվող եկեղեցական կարգերը։ Եվ հենց դա էր նրանց ավանդաբար շարունակվող գործը։ Այս իմաստով, ուրեմն, բնավ պատահական չէ «նախնեացն» հոգնակի ձևի օգտագործումը։ Եթե «գործը» վերաբերեր եկեղեցու շենքին, ապա պատմիչը պարտավոր էր օգտագործել և մազաչափ անգամ կասկած չպետք է լինի, որ կօգտագործեր եզակի ձևը՝ նշելով միայն Լուսավորչին։ Փարպեցին քաջ գիտեր, որ կաթողիկե եկեղեցու շենքը Գրիգոր Լուսավորիչն էր կառուցել և ոչ թե Վահան Մամիկոնյանի բոլոր նախնիները միասին առած։ Հայ մատենագրության մեջ եկեղեցին, «զոր հիմնարկեալ նորոգեաց» արտահայտությունը շատ հաճախ և մեծ մասամբ ունի եկեղեցի-հաստատությունը՝ կարգը, պաշտոնը, հայրապետական աթոռը նորոգելու իմաստ։ Օրինակ. «Եւ եղև խաղաղութիւն և նորոգութիւն յաւուրս նորա ամենայն եկեղեցեաց. և յաճախէր շուք պատուի ամենայն եպիսկոպոսացն ընդ ամենայն տեղիս Հայոց մեծաց։ Եւ լուսաւորութիւն կարգի եկեղեցւոյ ամենապայծառ ծաղկեաց ամենամեծ լիութեամբ. կարգեցան կարգք կաթողիկէ եկեղեցեաց ամենայն վայելչութեամբ, և բազմացան կարգք սրբութեան պաշտամանցն և պաշտօնէիցն յաճախութիւն։ Եւ բազմացոյց զկարգս եկեղեցեաց 'ի շէնս և յանշէնս. սոյն օրինակ բազմութիւնք կրօնաւորաց»14։ Կամ վերը բերված Գրիգորիսին վերաբերող օրինակը. «Նորոգեաց անդ զեկեղեցիսն լուսաւոր կարգօք...»։ Ուրեմն այս, ինչպես նաև «զհնացեալ գործ նախնեացն» արտահայտության մեր պարզաբանումը, միանգամայն որոշակի են դարձնում և հավաստում, որ նորոգումը վերաբերում է կաթողիկե եկեղեցի-հաստատությանը, հենց տեհոտում նշված ուխտին ու պատարագին, և ոչ թե կաթողիկե եկեղեցի-կառույցին։ Այս խնդրում պակաս կարևոր չէ նաև այն, որ Վահան Մամիկոնյանի ժամանակ եկեղեցական կարգն էր խախտված, և նրա գործը, նրա պատմական առաքելությունը հենց այդ խախտված կարգերի նորոգումն էր15։

Ղազար Փարպեցին իր պատմության մեջ տարբեր տեղերում, երբեք անգամ գրեթե նույնությամբ, նույն բառերով և ձևով նկարագրում է Վահանի և ուխտապահ նախարարների այցը Վաղարշապատ՝ կաթողիկե եկեղեցի, ուխտ ու պատարագ կատարելը և այնտեղից Դվին մեկնելը16։ Բնավ պատահական չէ, որ նորոգման մասին պատմիչը խոսում է հենց մեզ հետաքրքրող արարքության մեջ։ Քանի որ այստեղ է, որ Պերոզի մահվան լուրն առնելուց հետո Արյաց զորքը հրաման է ստանում թողնել և շտապ հեռանալ Հայոց աշխարհից։ Սա այն բաղձալի պահն էր, երբ Վահան Մամիկոնյանը հաղթում է և դրանով իսկ փրկում կործանման եզրին կանգնած քրիստոնեությունը՝ նորոգում «իր նախնիների հնացած գործը»՝ ուխտն ու պատարագը։ Հիշենք, որ հանուն սրա զոհվեց հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանը, «...քանզի չխորհէր զյաղ-

---

12 «Ղ ա զ ա ր ա յ Փ ա ր պ ե ց ւ ո ւ յ Պատմութիւն հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան», Թիֆլիս, 1907, էջ 345—346։

13 «Փ ա ւ ս տ ո ս ի Բ ի ւ զ ա ն դ ա ց ւ ո ւ յ Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912, էջ 17, 108։

14 Նույն տեղում, էջ 118—119։

15 Տե՛ս «Ղ ա ղ ա ր ա յ Փ ա ր պ ե ց ւ ո ւ յ Պատմութիւն հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան», էջ 354—355։

16 Նույն տեղում, էջ 310—311, 345—346, 389—390։

թուքեան ինչ անուն գտանել, այլ զհեղումն արեան անձինն ի վերայ շինութեան ուխտի եկեղեցւոյ մնչէր ըմբոնել»[17]։

Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Վահան Մամիկոնյանի ժամանակ արդեն նենգված էր ուխտը, բազմաթիվ քրիստոնյաներ մոգություն էին ընդունել, բացվել էին խաբեբայության դպրոցներ, կառուցվել էին բազմաթիվ ատրուշաններ ու մոխրատներ, ապա կարելի է ենթադրել, որ «զհնացեալ գործ նախնեացն իւրոց» արտահայտության մեջ «զհնացեալ» բառը պատմիչն օգտագործել է բառի մյուս՝ «երբեմն եղյալ» կամ նույնիսկ «ապականված» իմաստով[18]։ Այսինքն Վահան Մամիկոնյանը նորոգեց իր նախնիների այն գործը, որ երբեմնի եղած էր կամ այն, որ ապականված էր։ Եթե նույնիսկ ասվածը վերաբերեր կոնկրետ շինարարական գործունեությանը, կարծիք, որ չենք բաժանում, ապա Փարպեցու մոտ այս պարբերության մեջ նկարագրված հաշված օրերում կատարվող դեպքերի դինամիկ ընթացքը, նրանց անընդհատելիությունն ու սրընթաց ռիթմը, Վահան Մամիկոնյանի բացում ձեռնարկումների ստույգ թվարկումը, ինքնին վկայում են, որ «նորոգեաց»-ը չի կարող նշանակել շինվածքի սկզբունքային փոփոխություն, առավել ևս հիմնիվեր կառուցում։ Բերենք մեզ հետաքրքրող պարբերությունը փոքր կրճատումով միայն. «Եւ խօսեցեալ զայս Միհրանեանն Շապհոյ և դեսպանին ընդ միմեանս՝ հրաման տային զօրուն, և ըստ կարի օր ըստ օրէ չուռցն ճեպեալք՝ հասանէին յաշխարհն Պարսից։ ...Եւ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենի լուեալ զայս ամենայն բանս և զհամբաւս՝ Աստուծոյ այցելութիւն ընկենոյր և՛ զիրս համբաւոյն և զիւր զաշխարհիս Հայոց զպէտս և զհոգողութիւն, որ գիտէն զիւրաքանչիւր ուրուք զպատշաճ և զօգուտ, և մատակարարէ ողորմութեամբ իւրով ըստ ողջախոհութեան խնդրողացն։ Եւ եկեալ հասանէր այնուհետև ի Վաղարշապատ քաղաք հանդերձ ողջախորհուրդ և աննենգ ուխտապահ նախարարօքն Հայոց. կատարէր զսովորական ուխտս և զպատարագս ի սուրբ եկեղեցւոջն կաթողիկէի, զոր հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ զհնացեալ գործ նախնեացն իւրոց, քաջ զօրավարն Հայոց Մամիկոնեանն Վահան։ Եւ ի տեղիս վկայարանացն նախ հատուցանելով զաղքատացն զպէտս՝ ե ապա ինքեանք ուրախացեալք զուարճանային խնդութեամբ։ Եւ անտի լուեալ յոստանն ի Դուին մտանէին, և դադարեալ անդ աւուրս՝ սպասէին և ակն ունէին հրամանի առաջնորդութեանն Քրիստոսի»[19]։ Վահան Մամիկոնյանի նորոգման պարզորոշ և հստակ վկայությունը գտնում ենք նաև Ասողիկի մոտ. «Իսկ Վահան զեկեղեցիս Աստուծոյ լուսազարդեալ նորոգէր, զպաշտօնեայս ուխտին մեծարելով, բարեշէն զաշխարհս առնելով։ Նոյն և ի ժամանակս իշխանութեանն իւրոյ զմեծ կաթողիկէ եկեղեցին որ ի Հայս՝ վերստին մեծապէս նորոգեաց, զղասս կրօնաւորացն բազմացուցանելով,— որ Սուրենայ անապատն ասի—վերակացու նոցա կարգեալ զՂազար Փարպեցի, ճարտասան և պատմագիր»[20]։ Միանգամայն պարզ է, որ, ուխտի պաշտոնյաներին մեծարելով և կրոնավորների դասը բազմացնելով, Վահան Մամիկոնյանը մեծապես նորոգել է աստծու եկեղեցի և կաթողիկե եկեղեցի հաստատությունները և ոչ թե շենքերը։ Փարպեցու վկայության սխալ մեկնաբանությունը, որ, ինչպես նշեցինք, ծնվեց ճարտարապետության պատմության տեսական կռահումներից, իներցիայի այնպիսի ուժ ստացավ, որ ոչ միայն անվերապահորեն ընդունվեց ճարտարապետության պատմության մասնագետների, հայագետների կողմից և մտավ «Հայ ժողովրդի պատմություն» ե «Հանրագիտարան»[21], այլև մուտք գործեց անգամ Ղազար Փարպեցու բնագրի աշխարհարար թարգմանության մեջ. «զհնացեալ գործ նախնեացն իւրոցը», որ ընդամենը նշանակում է «իր նախնիների հնացած գործը», աշխարհարարում դարձել է «իր նախնիների կառուցած ու այժմ հնացած այդ եկեղեցին»[22]։ Դժվար չէ արդեն նկատել, որ «կառուցած», «ու այժմ», «այդ եկեղեցի» բառերը բնագրին խորթ հավելումներ են, ճարտարապետության պատմության

---

17 Նույն տեղում, էջ 125։

18 «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. II, Երևան, 1981, էջ 106—107։

19 «Ղ ա զ ա ր ա յ Փ ա ր պ ե ց ւ ո յ Պատմութիւն հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան», էջ 345—346։

20 «Ս տ ե փ ա ն ո ս ի Տ ա ր օ ն ե ց ւ ո յ Ա ս ո ղ կ ա ն Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 81—82։

21 «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1984, էջ 205, 572, «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 4, Երևան, 1978, էջ 72։

22 Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի. Հայոց պատմություն, Թուղթ Վահան Մամիկոնյանին, աշխարհարար թարգմանությունը Բագրատ Ուլուբաբյանի, Երևան, 1982, էջ 381։

տեսական սխալ կռահումների արձագանք։ Սակայն, եթե մի պահ անտեսենք մեր բերած փաստարկները և անգամ ընդունենք, որ Փարպեցու խոսքը վերաբերում է կաթողիկե կառույցին, ապա միևնույն է, ոչ մի հիմք չկա «հիմնարկեալ նորոգեաց» արտահայտությանը, որն ունի միայն ու միայն հիմնովին նորոգելու իմաստ, վերագրել հիմքից քանդելու և նորը կառուցելու, այսինքն հիմնադրելու, շինելու իմաստ։ Եվ դա այն դեպքում, երբ հայտնի է, որ նույնիսկ «շինել» բառը կարող է ունենալ վերականգնման, նորոգման իմաստ։

Մենք չենք բացառում, որ Վահան Մամիկոնյանի կողմից կամ նրա օրոք կաթողիկեի շենքը կարող է նորոգված լինել, ժամանակ առ ժամանակ պիտի նորոգվեր, գուցե և նորոգվել է։ Մեր պնդումն այն է, որ Ղազար Փարպեցու վերը բերված հատվածում և նրա պատմության մեջ ընդհանրապես կաթողիկե եկեղեցու շենքի հնացած լինելու, նորը կառուցելու, վերակառուցելու և նույնիսկ նորոգելու մասին խոսք անգամ չկա։ Ուրեմն այսօր մեզ հասած Մայր տաճարը Գրիգոր Լուսավորչի կառուցածը չհամարելու և Վահան Մամիկոնյանին վերագրելու առաջին փաստարկը հերքվում է՝ իբրև պատմագրական վկայության սխալ մեկնաբանության արդյունք:

Մյուս հիմնական փաստարկի համար հիմք են ծառայել տաճարում 1950-ական թվականների պեղումներից հայտնաբերված մանրամասները՝ արևելյան խորանի աբսիդի մնացորդներ, դմբեթակիր մույթերի առաջին շարք խարիսխներ, պատարագի վեմ քար, խճանկարի բեկորներ։ Ուսումնասիրողները սրանք մեզ հասած տաճարից ավելի հին անվանեցին և վերագրեցին Լուսավորչաշեն տաճարին։ Դրանով իսկ վերջնականապես ապացուցված համարեցին այն վարկածը, թե մեզ հասած շենքը Վահան Մամիկոնյանի կառուցածն է։ Սրանով ապացուցված համարվեց նաև Ղազար Փարպեցու իրենց մեկնաբանությունը։ Բացված կրակարանի մասին հայտնեցին այն կարծիքը, թե այն IV—V դարերում պարսիկներն են կառուցել, չբացառելով նաև, որ կրակարանը կարող էր գոյություն ունեցած լինել մինչև եկեղեցու կառուցումը[23]։ Սակայն Մայր տաճարի սպասավորները և զբոսաշրջիկներին ուղեկցողները, հայտնի չէ, թե որ ուսումնասիրության կամ ում կարծիքի հիման վրա, հայտնաբերված նյութը համառորեն ներկայացնում էին իբրև կռապաշտ հայերի հեթանոսական կառույցի մնացորդներ։ Սակայն ավելի զարմանալին այն էր, որ այս կարծիքը ընդունեցին և շրջանառության մեջ դրին ճարտարապետության պատմության մասնագետները[24]։

Տաճարում հայտնաբերված մնացորդների մասին գաղափար կազմելու համար միանգամայն բավարար է դեմքով կանգնել դեպի խորանը, որպեսզի պարզ լինի հետևյալը՝ առաջին. կրակարան կամ ատրուշան կոչվածը, որ գտնվում է ոչ թե աբսիդի կենտրոնում, ինչպես նշում են, այլ նրա առանցքից աջ՝ սովորական մի թոնիր է։ Ուշագրավ է, որ մոխրով լիքը մի կարաս էլ կա ճիշտ և ճիշտ առանցքի վրա, սակայն արդեն աբսիդից դուրս։ Դժվար է ասել. աբսիդից դուրս գտնվելու հանգամա՞նքը, թե՞ կրկնակի «ատրուշան» լինելու փաստն է եղել պատճառը, որ այդ մոխրով լիքը կարասը «վրիպել» է ուսումնասիրողների աչքից։ Երկրորդ. «աբսիդի ստորին շարք» կամ «աբսիդի հիմք» կոչվածը, որ այսօրվա խորանի ճիշտ և ճիշտ նույն պարագծով ձգվող մի շարք է միայն, ոչ ամբողջությամբ պահպանված, մի ժամանակ խորանին հպված աստիճանաձև, թերևս նստարանների, ստորին շարքն է եղել։ Արևելյան խորանում ուսումնասիրողների նշած որևէ կառույցի հիմք կամ հիմքի մնացորդ գոյություն չունի։ Երրորդ. խորանի երկու անկյուններում տեղադրված խարիսխների դեպի խորան նայող երկու տրամատված ճակատները տաշված են։ Տաշված խարիսխներն ու պահպանված այդ շարքը միևնույն մակարդակի վրա են գտնվում և դժվար չէ կռահել, որ տրամատները տաշվել են աստիճանաձև նստարանների հաջորդ շարքերը խորանի պատին հպելու համար։ Չորրորդ. խորանի երկու անկյուններում տեղադրված խարիսխները ինքնին մատնանշում են խորանի հատակի սկզբնական մակարդակը։

Այս փաստերը բավական ակնառու են, և զարմանալի է, թե ինչպես պեղողներից, հատուկ հրավիրված պաշտոնական հանձնախմբի անդամներից, դրանից հետո ու մինչև օրս տաճարի մասին կարծիք հայտնող մասնագետներից և ոչ մեկը չի նկատել վերը բերված բացահայտ փաստերը, և 30 տարի շարունակ գրվել, կրկնվել ու ընդունվել է մի բան, որ տաճարում պար-

---

23 Ա. Ս. Սահինյան, Էջմիածնի Մայր տաճարի սկզբնական տեսքը («Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 3, էջ 75)։

24 Կ. Հովհաննիսյան, Ճարտարապետական հուշարձանների վերանորոգումը Սովետական Հայաստանում, Երևան, 1978, էջ 94։ Վ. Հարությունյան, Էջմիածնի գանձերը, Էջմիածին, 1984։

դապես գոյություն չունի։ Բերված փաստերը վկայում են, որ մեզ հասած տաճարն ավելի վաղ է կառուցվել, քան «Լուսավորչաշեն» կամ «ներսեսական» կոչված շենքի մնացորդները: Ուրեմն հայտնաբերված աբսիդի մնացորդները (և պատարագի վեմ քարը) ոչ Լուսավորչաշեն են, և ոչ էլ մանավանդ ներսեսական, այլ պարզապես Լուսավորչի կառուցած տաճարում արված հետագա հավելում են: *Այս տեսակետը չի փոխում եղած այն կարծիքը, թե գմբեթակիր մույթերի ներքևի խարիսխները և հայտնաբերված խճանկարը պատկանել են Լուսավորչաշեն տաճարին։ Դրանք, անկասկած, Լուսավորչաշեն տաճարինն են, սակայն ոչ թե «ինչ որ ժամանակ գոյություն ունեցած»,* այլ այսօր մեզ հասած տաճարինը: *Ինչ վերաբերում է թոնրի և հատկապես մոխրով լիքը կարասի առկայությանը, ապա հարկ է նկատել, որ սա եզակի փաստ չէ, նմանրան կա նաև Թանահատի և Քասաղի հուշարձաններում։ Հարցը կարոտ է մանրազնին քննության, թեև այժմ էլ կարող ենք ասել, որ տաճարում մոխիր թաղելը չպետք է անվերապահորեն կապել ատրուշանի կամ պարսկական կրոնի հետ. բավարար հիմք կա ենթադրելու, որ այն կապված է եղել հենց քրիստոնեական ծեսի կամ սովորույթի հետ, և ուրեմն դրանք կարող էին դրված լինել տաճարի կառուցման ժամանակ կամ էլ հետագայում։ Բացառված չէ նաև, որ թոնիրը, հատկապես այս դեպքում, եկեղեցու հետ կապ չունի։ Այն կարող էր ինչ-որ ժամանակ սարքված և օգտագործված լինել հենց որպես թոնիր։*

Ուրեմն մեզ հասած Մայր տաճարը Լուսավորչի կառուցած չհամարելու և Վահան Մամիկոնյանին վերագրելու երկրորդ՝ իբրևեն ապացույց համարվող փաստարկը, նույնպես հերքվում է՝ իբրև փաստական նյութի սխալ մեկնաբանման արդյունք:

Այսպիսով, մենք փորձեցինք համառոտ ներկայացնել քրիստոնեական ճարտարապետության առաջնեկի՝ Էջմիածնի Մայր տաճարի, ուսումնասիրության պատկերը և ցույց տվեցինք, որ տաճարը Լուսավորչաշեն չհամարելու համար բերված հիմնական փաստարկները սխալ են, անհիմն։

Էջմիածնի Մայր տաճարի մասին մեր եզրակացությունը, եթե ներկայացնենք Մ. Աբեղյանի բառերով և ձևակերպմամբ (որը վերաբերում է Մովսես Խորենացու ժամանակը վիճարկող գիտական տուրևառություններին), ապա կլինի հետևյալը. այս բոլոր փոխադարձ հերքումներից, ժխտումներից ու բացառումներից հետո մեր առաջին և Մայր տաճարին էլ ուրիշ բան չի մնում անել, բայց եթե ետ քաշվել ու նստել իր հին ու բնական տեղում—IV դարի առաջին տարիներին:

ЭЧМИАДЗИНСКИЙ КАФЕДРАЛЬНЫЙ СОБОР

ВААГН ГРИГОРЯН

Резюме

В научных исследованиях по истории армянской архитектуры в течение последних восьмидесяти лет устоялась точка зрения, согласно которой армянская церковная архитектура развивалась по пути постепенного усложнения простых форм. Исследование Эчмиадзинского собора показывает, что эта главенствующая и безоговорочно принятая точка зрения,—результат упрощенного взгляда на процесс развития, и потому созданная на этой основе картина развития армянской христианской архитектуры, а также принятые датировки многочисленных памятников раннего периода представляются полностью неприемлемыми.

Историографические данные и анализ памятника доказывают, что Кафедральный собор, построенный Григорием Просветителем, дошел до нас в своей первозданной и основной объемно-пространственной композиции и со дня основания не подвергался перестройке (за исключением купола) или какому-либо принципиальному изменению.